Ձևաչափ N 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Միջոցառումը	Ակնկալվող անմիջական արդյունք	Ժամկետը	Կատարման ընթացքը
Էներգետիկա • Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040 թվականը), • Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույց /2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշում/				
1.1	ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի մինչև 2026թ. երկարաձգման ծրագրի աշխատանքների իրականացում	ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդյունավետ և անվտանգ աշխատանքի ապահովում մինչև 2026թ.	2022-2025 թվականներ	Ծրագրի շրջանակներում իրականացվել և իրականացվում են հետևյալ աշխատանքները. Իրականացվել են՝ Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի տեխնոլոգիական գործընթացների և կատարող մեխանիզմի ավտոմատ կարգավորման սարքավորումների արդիականացման, Գլխավոր և հատուկ մասնաշենքերի (2ՊԷՍ-1, 2ՊԷՍ-2) սառնամատակարարման օդի օդափոխության համակարգերի տեղակայում՝ նախագծով նախատեսված անհրաժեշտ բաղկացուցիչ մասերի մատակարարման, Թրծաթողումից հետո շահագործման ընթացքում Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորի իրանի մետաղի հատկությունների վերահսկման ծրագրի մշակման և ապահովման աշխատանքները: Իրականացման փուլում են Հայկական ԱԷԿ-ի առանձին հատկացրած տարածքում ապամոնտաժային, կառուցա-մոնտաժային, գործարկման, կարգաբերման աշխատանքները՝ նոր բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-110/220 կՎ-ի) կառուցման համար, Հայկական ԱԷԿ-ի շրջանառու ջրի հովացման համակարգի թիվ 1 և թիվ 3 աշտարակների արդիականացման, Հայկական ԱԷԿ-ի

				№ 2 էներգաբլոկի տեխնոլոգիական գործընթացների ավտոմատ կարգավորման համակարգի արդիականացման ժամանակ ապատեղակայում և տեղակայում, Գլխավոր մասնաշենքի (1,2Π-1/Α,Β; Π-3Α,Β; 2Π-4Α,Β) օդափոխման համակարգերի փոխարինում և Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների մատակարարման աշխատանքները: Հայկական ԱԷԿ-ի վթարային էլեկտրամատակարարման համակարգի դիզել գեներատորային կայանք և ՀԱԷԿ-ում ռադիոակտիվ թափոնների վերամշակման համալիրի նախագծում և կառուցում աշխատանքների իրականացման շրջանակներում իրականացվում են մրցութային գործընթացներ: ՀՀ ֆինանսների նախարարության և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ միջև 2024թ. դեկտեմբերի 2-ին կնքվել է 2024թ. հատկացվելիք 5,965 մլրդ ՀՀ դրամի վարկային պայմանագիրը: Բացի այդ իրականացվում են արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված մյուս աշխատանքները, ինչպես նաև կազմակերպվում են մրցութային գործընթացներ՝ 2025 թվականի և հետագա տարիների աշխատանքների իրականացման համար: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մոտ 8.6 մլրդ դրամի վճարումներ: Կատարված վճարումներից մոտ 2.5 մլրդ դրամի վճարումները համարվում են 2021 թվականին հատկացված բյուջետային վարկի մնացորդներ: Միևնույն ժամանակ, 2024 թվականի մայիսի 15-ից ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկը կանգնել է ամենամյա պլանային նախազգուշական վերանորոգման (ՊՆՎ-2024): Փաստացի

				աշխատանքների տևողությունը կազմել է 88 օր՝ պլանավորված 95 օրվա փոխարեն: Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքում՝ Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետը երկարաձգվել է 10 տարով (մինչև 2026 թվականը), իսկ էներգաբլոկի շահագործման լիցենզիայի ժամկետը երկարացվել է մինչև 2031 թվականը՝ մինչև 2026 թվականի սեպտեմբեր հզորությամբ աշխատելու թույլտվությամբ: Իսկ Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ռեակտորի իրանի թրծաթողման աշխատանքների կատարումից հետո կատարված հաշվարկները ցույց են տվել, որ որոշակի աշխատանքների իրականացման պայմաններում հնարավոր է ռեակտորը շահագործել մինչև 2039 թվականը: Ընթացիկ տարում իրականացված աշխատանքների արդյունքում՝ ՀՀ ՄԱԿ կոմիտեն թույլատրել է էներգաբլոկը շահագործել ռեակտորի 100% ջերմային հզորության ռեժիմում: Ծրագրի ավարտից հետո նախատեսվում է ՀԱԷԿ-ի կողմից տարեկան շուրջ 2.9 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրություն: 2024թ-ին արտադրվել է շուրջ 2.8 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա՝ ընդհանուր արտադրանքի 30.2%-ը:
1.11	Ինքնավար արևային կայանների կառուցում՝ ընդհանուր դրվածքային հզորությունը 40ՄՎտ-ից հասցնելով 350 ՄՎտ	Էներգետիկ անկախության մակարդակի բարձրացում	2024թ. դեկտեմբեր	31.12.2024թ. դրությամբ ինքնավար էներգաարտադրողների ընդհանուր քանակը կազմում է 31249՝ 420,5 ՄՎտ հզորությամբ: 31.12.2024թ. դրությամբ տեխնիկական պայմաններ են ստացել ևս 209 ինքնավար կայաններ՝ 12,8 ՄՎտ հզորությամբ: Ռազմավարությամբ նախատեսված 350 ՄՎտ թիրախային ցուցանիշը գերազանցել է 83,3 ՄՎտ-ով կամ 23,8%-ով:

2.1	«Զարենցավան-3» 110 կՎ լարման ենթակայանի վերակառուցում	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության բարձրացում	2023-2026 թվականներ	«Զարենցավան-3» ենթակայանի վերակառուցման նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և «EFACEC Engenharia e Sistemas, S.A.» (Պորտուգալիա) ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև կնքված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է 2023թ. մարտի 16-ին, սակայն Կապալառուն խախտել է Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների կատարումը և չի ավարտել ենթակայանի վերակառուցման աշխատանքները: Քննարկումների և բանակցությունների արդյունքում 2023թ. նոյեմբերի 30-ին Պատվիրատուի և Կապալառուի միջև սահմանված կարգով ստորագրվել է Հաշտության համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր): 2023թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ, Համաձայնագրի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է լուծված: Քննարկվում է ենթակայանի վերակառուցման հետագա իրականացման հարցը, մասնավորապես՝ ենթակայանի վերակառուցման աշխատանքները նախատեսվում է շարունակել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանում էներգետիկ վերափոխման խթանում» արդյունքահեն ծրագրի շրջանակներում:
2.3	«Ջովունի» 220 կՎ լարման ենթակայանի վերակառուցում	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության բարձրացում	2024թ. դեկտեմբեր	Միջոցառման շրջանակներում շարունակվել են «Ջովունի» ենթակայանի վերակառուցման շինարարական, անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների ներկրման աշխատանքները: Ավարտվել են ենթակայանի պահակատան նոր շենքի կառուցման և պահեստի շենքի վերակառուցման շինարարական և 1-ին փուլով նախատեսված՝ էլեկտրատեղակայանքների տեղակայման շինմոնտաժային և կարգաբերման աշխատանքները: Վերակառուցված էլեկտրատեղակայանքները

				սահմանված կարգով դրվել են լարման տակ և շահագործվում են: Կապալառուի կողմից մատակարարվել են ենթակայանի վերակառուցման համար նախատեսված գրեթե բոլոր սարքեր-սարքավորումները: Շարունակվում են 2-րդ փուլով նախատեսված էլեկտրատեղակայանքների վերակառուցման շինմոնտաժային՝ ղեկավարման շենքի արհեստանոցի, ենթակայանի աշխատասենյակների վերակառուցման, ինչպես նաև ներքին ճանապարհների ասֆալտապատման, ենթակայանի արտաքին ցանկապատի կառուցման աշխատանքները: Ենթակայանի վերակառուցման աշխատանքների ավարտը սահմանված էր 2024թ., սակայն Կապալառուի կողմից սարքավորումների ներկրման ու կարգաբերման աշխատանքների իրականացման ժամկետների շեղումներով պայմանավորված՝ աշխատանքները կավարտվեն ուշացմամբ, աշխատանքների մի մասի իրականացումը տեղափոխվել է 2025թ.: Հաշվետու ժամանակահատվածում միջոցառման շրջանակներում իրականացվել են մոտ 118,5 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ:
2.5	«Շինուհայր» 220 կՎ լարման ենթակայանի վերակառուցում	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության բարձրացում	2023-2024 թվականներ	2022թ. ապրիլի 27-ին «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ և «Կասկադ էներգո» ՍՊԸ միջև կնքվել է 220/110/35/10/6 «Շինուհայր» ենթակայանի վերակառուցման կապալային աշխատանքների պայմանագիրը: ԲԷՑ-ի սեփական միջոցներով ավարտվել են ենթակայանի վերակառուցման աշխատանքները և ենթակայանը դրվել է լարման տակ: Ներկայում ընթանում է կապալառուի կողմից փաստացի կատարված աշխատանքների ծավալների ճշգրտման գործընթաց:
2.7	«Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի վերակառուցում	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության բարձրացում	2024թ. դեկտեմբեր	Միջոցառման շրջանակներում շարունակվել են «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման շինարարական, անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների ներկրման աշխատանքները: Ավարտվել են վերակառուցման 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերով

				նախատեսված՝ էլեկտրատեղակայանքների տեղակայման շինմոնտաժային և կարգաբերման աշխատանքները: Ենթակայանը սահմանված կարգով ամբողջությամբ դրվել է լարման տակ և շահագործվում է: Կապալառուի կողմից մատակարարվել են ենթակայանի վերակառուցման համար նախատեսված բոլոր սարքեր-սարքավորումները: Ենթակայանի վերակառուցման աշխատանքների ավարտ էր սահմանվել 2024թ. դեկտեմբերի 29-ը: Կապալառուի կողմից 4-րդ փուլի սարքավորումների մատակարարման և շինմոնտաժային աշխատանքների ավարտական փաստաթղթերը ներկայացվել են Պատվիրատուին, սակայն նշված աշխատանքների դիմաց ներկայացված հանձման-ընդունման արձանագրությունները չեն ընդունվել՝ աշխատանքներում տեղ գտած թերությունների պատճառով: Իրականացվում են թերությունների վերացման աշխատանքներ: Աշխատանքները կավարտվեն 2025թ.: Հաշվետու ժամանակահատվածում միջոցառման շրջանակներում իրականացվել են մոտ 6,2 մլն ԱՄՆ դոլարի աշխատանքներ:
2.15	Իրան - Հայաստան 400 կՎ լարման երկշղթա էլեկտրահաղորդման օդային գծի և 400 կՎ լարման «Նորավան» ենթակայանի կառուցման ծրագրի իրականացում	Էլեկտրահաղորդման գծի և ենթակայանի կառուցումը հնարավորություն կտա երկու երկրների էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 350 ՄՎտ-ից հասցնել մինչև 1200 ՄՎտ, միաժամանակ	2021-2024 թվականներ	Միջոցառման շրջանակներում կառուցվող էլեկտրահաղորդման օդային գծի երկարությունը մոտ 268 կմ է: Ծրագրի շրջանակներում նախատեսված 711 հենարանից բետոնացվել է 696 հենարանի հիմք, մոնտաժվել 535-ը, ներմուծվել է 663 ամբողջական հենարան, իրականացվել են մոտ 70 կմ հաղորդալարերի մոնտաժման և լարածգման աշխատանքներ: Ամբողջությամբ ներմուծվել են ամպրոպապաշտպան ճոպանը և օպտիկամանրաթելային մալուխը: Իրականացվում են դեպի հենարաններ տանող մոտեցման ճանապարհների շինարարության, հենարանների հիմքերի բետոնացման և հենարանների մոնտաժման աշխատանքներ: «Նորավան» ենթակայանում գրեթե ավարտվել են բարձր լարման

		բարձրացնել էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքի հուսալիությունը և Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգությունը:		սարքավորումների, կոշտ հաղորդաձողային համակարգի մոնտաժման և մալուխային խրամուղիների բետոնացման, ինչպես նաև Բջիջների ղեկավարման շենքի ներքին հարդարման աշխատանքները: Ներմուծվել են ենթակայանի բարձր լարման սարքավորումները, 33 կՎ բջիջները, ցածր լարման պաշտպանության և ղեկավարման սարքավորումները, ուժային և ղեկավարման մալուխները: Ընթացքում են հողանցման համակարգի, ջրահեռացման համակագի և խրամուղու պատի բետոնացման, շենք-շինությունների կառուցման և հողի հետլցման, արտաքին պարսպի բետոնի նախապատրաստական շերտի և պատի շարման, մալուխների փռման, օպերատիվ ղեկավարման և պահակատան շենքերի ներքին հարդարման, մասնավորապես՝ սենյակների պատերի և առաստաղի ծածկման, հատակների պրեսգրանիտե սալիկներով շարման և ներքին էլեկտրամոնտաժային աշխատանքները: Միջոցառման սկզբից մինչև հաշվետու ժամանակահատվածը միջոցառման կապալառու «Սանիր» ընկերությանը (այսուհետ՝ Կապալառու) վճարվել է 86,1 մլն եվրո գումար, այդ թվում՝ էլեկտրահաղորդման օդային գծի մասով՝ 57,64 եվրո, «Նորավան» ենթակայանի մասով՝ 28,46 մլն եվրո: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի, Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) արտակարգ և լիազոր դեսպան Մեհդի Սոբհանիի, միջոցառումն իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և Կապալառուի ներկայացուցիչների միջև տեղի են ունեցել հանդիպումներ, որոնց արդյունքում միջոցառման ֆինանսական հոսքերն ակտիվացնելու, ինչպես նաև միջոցառման առաջընթացն ապահովելու նպատակով Ընկերությունը Իրանի արտահանման զարգացման բանկի (այսուհետ՝ ԻԱԶԲ) վարկային և Ընկերության

				սեփական միջոցներից Կապալառուին պարբերաբար տրամադրել է կանխավճարներ և փոխառություն՝ ընդհանուր 10,9 մլն եվրոյի չափով, որն ամբողջությամբ չի մարվել, և մնացորդը կազմում է 1,56 մլն եվրո, ինչպես նաև Ընկերությունը 4,050 մլն եվրո գումար տրամադրել է Կապալառուին՝ «Սանիր ինթերնեյշնլ ՖԶԵ» ընկերության կողմից տրամադրված փոխառության մայր գումարից վաղաժամ մարման սկզբունքով՝ կնքելով եռակողմ համաձայնագրեր: Միջոցառման շրջանակներում «Նորավան» ենթակայանում 2023թ. ապրիլ ամսին հայտնաբերվել են երկու ավտոտրանսֆորմատորներից (այսուհետ՝ ԱՏ) պղնձե փաթույթների գողության դեպքեր, որի արդյունքում ԱՏ-ները գործնականորեն դարձել են ոչ պիտանի: Կապալառուն հայտնել է, որ վերջիններիս ձեռքբերման համար բավարար ֆինանսական միջոցներ առկա չեն, հետևաբար նոր ԱՏ-ների մատակարարումը վերստին դարձել է անհնար: Հարցը կարգավորելու նպատակով ՀՀ կառավարության 21.11.2024թ. N 1840-Ն որոշմամբ Ընկերությանը տրամադրվել է 2,070 մլրդ դրամ գումարի չափով բյուջետային վարկ, որից 2024թ.համար՝ 1,035 մլրդ դրամ և 2025թ.՝ 1,035 մլրդ դրամ: ՀՀ ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 02.12.2024թ. կնքվել է 2024թ. հատկացվելիք 1.035 մլրդ ՀՀ դրամի վարկային պայմանագիրը: 20.12.2024թ. նախատեսված գումարը սահմանված կարգով փոխանցվել է Կապալառուին: Նշված գումարը Կապալառուին վճարման պահից համարվել է մարված՝ Ընկերության և «Սանիր Ինթերնեյշնլ ՖԶԵ» ընկերության միջև կնքված Փոխառության պայմանագրի շրջանակներում «Սանիր Ինթերնեյշնլ ՖԶԵ» ընկերության կողմից Ընկերությանը տրամադրված փոխառությունից վերադարձման ենթակա հիմնական (մայր) գումարից: Միջոցառման իրականացման վերջնաժամկետ էր սահմանված 2024թ. դեկտեմբերի 31-ը, սակայն Միջոցառման

				շրջանակներում առկա խնդիրների, այդ թվում՝ ավտոտրանսֆորմատորներից և էլեկտրահաղորդման օդային գծից տեղի ունեցած գողության դեպքերի պատճառով սահմանված ժամկետում միջոցառման իրականացումն ավարտին հասցնելը դարձել էր անհնար, ուստի հաշվի առնելով միջոցառման կարևորությունը, ինչպես նաև դրա իրականացման վերաբերյալ երկու երկրների կառավարությունների միջև պայմանավորվածությունները՝ սահմանված կարգով միջոցառման գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը: Հաշվետու ժամանակահատվածում միջոցառման շրջանակներում իրականացվել են մոտ 6,7 մլն եվրոյի վճարումներ:
4.6	«Էլեկտրաէներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի մշակում՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի մոդելի և էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմների ներդրման ընթացքում առաջ եկած խնդիրները	էլեկտրաէներգիայի և հզորության ազատականացված շուկայի կարգավորման և նորմատիվային դաշտի ապահովում	2023-2025 թվականներ	ԱՄՆ ՄԶԳ շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի առևտրի ծրագրի շրջանակներում մշակվել է «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի նախագիծը, որի չորրորդ խմբագրությունը գտնվում է շահագրգիռ կողմերի հետ քննարկման փուլում: Նախագծի մշակման վերջնականացումը նախատեսվում է 2025 թվականին:
5.1	ԵԱՏՄ էլեկտրաէներ-գետիկական ընդհանուր շուկայում մասնակցություն՝ համաձայն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 20.12.2019թ. N 31	Կարգավորող փաստաթղթերի մշակում և ընդունում	2021-2026 թվականներ	2024թ. ընդունվել է «ԵԱՏՄ էլեկտրաէներգետիկական շուկայում տեղեկատվության փոխանակման կանոններ» փաստաթուղթը: 2024թ. ընթացքում ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման շրջանակներում կայացել են ԵԱՏՄ անդամ պետությունների էներգետիկայի բնագավառի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի, ԵԱՏ Հանձնաժողովի կոլեգիային կից էլեկտրաէներգետիկայի խորհրդատվական կոմիտեի, խորհրդատվական կոմիտեի

	որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացման պլանի			էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ենթակոմիտեի մի շարք նիստեր և խորհրդակցություններ:
5.2	ԵԱՏՄ բնական գազի ընդհանուր շուկային մասնակցություն՝ համաձայն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 31.05.2016թ. N 7 որոշման:	Կարգավորող փաստաթղթերի մշակում և ընդունում	2021-2026 թվականներ	2024թ.-ի ընթացքում շարունակվել են Միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման մասին միջազգային պայմանագրի, Գազի փոխադրման ծառայությունների հասանելիության միասնական կանոնների, Գազի բորսային առևտրի իրականացման կարգի նախագծերի շրջանակներում աշխատանքները: Հիշյալ փաստաթղթերը քննարկվել են տարբեր մակարդակներում՝ հաշվի առնելով նաև անդամ պետությունների ղեկավարների հանձնարարականը՝ չհամաձայնեցված սկզբունքային կետերը ևս մեկ անգամ ավելի ցածր մակարդակում քննարկելու վերաբերյալ: 2024թ. ընթացքում ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկայի ձևավորման շրջանակներում կայացել են ԵԱՏՄ անդամ պետությունների էներգետիկայի բնագավառի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի, ԵԱՏ Հանձնաժողովի կոլեգիային կից նավթի և գազի խորհրդատվական կոմիտեի, գազի շուկայի ձևավորման գործողությունների ծրագրի իրականացման աշխատանքային խմբի մի շարք նիստեր և խորհրդակցություններ:
5.3	Հայաստան-Եվրոպական միություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված միջոցառումների իրականացում՝ էներգետիկայի բնագավառում բարեփոխումների իրականացում համաձայն ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ ընդունված	Հայաստան-Եվրոպական միություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրագործում	2021-2026 թվականներ	ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ սահմանած ժամկետներում իրականացվում են 2012/27/ԵՄ, 2010/31/ԵՄ, 2009/28/ԵՀ, 2009/72/ԵՄ հրահանգներին և 714/2009 Կանոնակարգին ՀՀ օրենսդրության մոտարկման աշխատանքները: ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ համաձայնագրով նախատեսված աշխատանքները շարունակական են: Առ այսօր իրականացվել են. • ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվել են՝

	ճանապարհային քարտեզի, որտեղ հստակ նշված են իրականացման ժամկետներն ու պատասխանատու մարմինները:			➢ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բացերի վերլուծություն, ➢ «Հայաստանում վերականգնվող էներգիայի զարգացման նպատակով քաղաքականության, իրավական, կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակներում բացերի վերլուծություն», ➢ Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագրի շրջանակներում՝ «ՎԷԱ շուկայահեն աջակցության սխեմաների կիրառման և լավագույն փորձը» նախագծի մշակում, ➢ Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ազատականացման շրջանակներում՝ - ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների նոր առևտրային կանոնների, բաշխման և հաղորդման ցանցային կանոնների հաստատումը, Շուկայի օպերատորի ստեղծումը, որոնք մի քանի քայլ առաջ են մղում ՀԸԳՀ շրջանակներում ստանձնած մոտարկման աշխատանքները: 714/2009 (ԵՀ) կանոնակարգի մոտարկմանն ուղղված՝ 2022թ. փետրվարի 1-ից անցում է կատարվել էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելին: - «Տետրատեկ» ընկերության կողմից մշակվել են «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» նոր օրենքների նախագծերը, որոնք քննարկման փուլում են: • Վրաստանի հետ էլեկտրաէներգիայի անդրսահմանային փոխանակման պայմանների կանոնակարգումը ապահովելու նպատակով 2022թ. օգոստոսի 4-ին Թբիլիսիում էներգետիկայի բնագավառի հայկական և վրացական համապատասխան ընկերությունների միջև ստորագրվել է «ՀՀ-ի և Վրաստանի միջև վթարային իրավիճակներում էլեկտրաէներգիայի մատակարարումների

				մասին» պայմանագիրը: Նախատեսվում է ստորագրել նաև «ՀՀ-ի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի կոմերցիոն մատակարարումների շրջանակներում շեղումների կարգավորման մասին» պայմանագիրը, որը ներկայումս գտնվում է համաձայնեցման փուլում: • ՀՀ ՏԿԵ նախարարությունը՝ Համաշխարհային բանկի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ մշակել է էներգիայի կուտակիչ մարտկոցների համակարգերի կառուցման բիզնես մոդելների հայեցակարգը, որի հիման վրա ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացվում է էներգիայի կուտակիչ մարտկոցների համակարգերի պարագայում կիրառվող սակագնային քաղաքականության ուսումնասիրություն: • Շենքերի էներգաարդյունավետության մասին պահանջը ներառվել է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում: ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N426-Ն որոշմամբ ընդունվել է «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը»: Քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել են համապատասխան ակտերը. ✓ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թ. դեկտեմբերի 22-ի N31-Ն հրամանը՝ ՀՀՇՆ 24-02-2022 «Շենքերի էներգաարդյունավետության ապահովում. Էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ»

				Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու մասին. ✓ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թ. հունվարի 21-ի N77-Ն «Պետության կարիքների ապահովման նպատակով ձեռք բերվող էներգասպառող արտադրանքների էներգետիկ բնութագրերի պարտադիր պահանջների խմբերի ցանկը սահմանելու մասին» որոշումը: • ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021թ. մայիսի 19-ի N180-Ն որոշմամբ հաստատվել են էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման, լիցենզավորված անձանց ներդրումների մասին հաշվետվության ներկայացման, էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ներդրումային գործունեության մոնիթորինգի կարգերը: Ներկայում՝ հաշվի առնելով ՀԸԳՀ Ճանապարհային քարտեզի նորացման հանձնառությունը, ընթացքում է 2019-2024թթ. նախատեսված գործողությունների առաջին գնահատումը: Այդ նպատակով ՀԸԳՀ համատեղ մշտադիտարկման մեխանիզմի ներդրման աշխատանքների շրջանակներում իրականացվում է միջոցառումների և սահմանված ցուցանիշների համապատասխանելիության գնահատում:
5.4	Հայաստանի և Իրանի միջև էներգետիկ համագործակցության ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացում և համաձայնագրերի կնքում	Հայաստան-Իրան գազէլեկտրա-էներգիայի դիմաց փոխանակման ծրագրի իրագործում	2021-2025 թվականներ	2022թ. նոյեմբերի 1-ին ՀՀ վարչապետի Իրան այցի շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ստորագրվել է «Բնական գազի բնագավառում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագիր, որով հայկական և իրանական համապատասխան ընկերություններին հանձնարարվել է ստորագրել «Գազ-էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ պայմանագիր՝ հաշվի

				առնելով, որ գործող պայմանագրի ժամկետը լրանում է 2026թ.-ին: 2023թ. օգոստոսի 10-ին երկու երկների համապատասխան ընկերությունների միջև ստորագրվել է պայմանագիրը, համաձայն որի ծրագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 2030թ.: Պայմանագրով նախատեսվում է նաև մեծացնել Իրանից ներմուծվող գազի և դրա դիմաց Հայաստանից արտահանվող էլեկտրաէներգիայի ծավալները: 2024թ. հայկական և իրանական կողմերի միջև վերացվել են առկա խոչընդոտները (Արաքսի գետանցի՝ հայկական մասնաբաժնի վճարում) և ծավալների ավելացման դրույթները մտել են ուժի մեջ:
5.5	5.5.1 Հայաստանի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի միջպետական առևտրի իրականացման նպատակով Հայաստան-Վրաստան համատեղ աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում և էլեկտրաէներգիայի առևտրի սկզբունքների մասին համաձայնագրի մշակում	Արդյունքում նախադրյալներ կստեղծվի երկու երկրների միջև էլեկտրաէներգիայի կանոնավոր առևտրի իրականացման համար՝ հնարավորինս հենվելով Եվրոպական միության դիրեկտիվների պահանջների վրա:	2021-2026 թվականներ	Հայաստանի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի միջպետական առևտրի իրականացման նպատակով Հայաստան-Վրաստան համատեղ աշխատանքային խմբի կողմից շարունակվել են աշխատանքները: Էներգետիկայի բնագավառի հայկական և վրացական համապատասխան ընկերությունների միջև ստորագրվել է «ՀՀ-ի և Վրաստանի միջև վթարային իրավիճակներում էլեկտրաէներգիայի մատակարարումների մասին» պայմանագիրը: Շրջանառության մեջ է գտնվում «ՀՀ-ի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի կոմերցիոն մատակարարումների շրջանակներում շեղումների կարգավորման մասին» պայմանագրի նախագիծը: Ներկայում Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխհոսքերն իրականացվում են կոմերցիոն պայմանագրով, որոնք կազմակերպում են հայկական-վրացական համապատասխան ընկերությունների (հայկական ԷԷՀՕ-ի, վրացական GSE-ի) կողմից էլեկտրաէներգետիկական
	5.5.2 Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի առևտրի սկզբունքների մասին համաձայնագրի կնքում		2023-2026 թվականներ	

				համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին պայմանագրի հիման վրա: Հետագայում Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման օդային գծի շահագործման հանձնելու դեպքում կմշակվի զուգահեռ աշխատանքի մասին նոր պայմանագիր: Հայաստանի և Վրաստանի միջև էլեկտրաէներգետիկայի բնագավառում համագործակցության շրջանակներում մշակվել է «ՀՀ-ի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի առևտրի սկզբունքների մասին» համաձայնագրի նախագիծը: Հայկական կողմից լրամշակված նախագիծն ուղարկվել է վրացական կողմին: Վրացական կողմը համաձայնագրի ստորագրումը կապում է Վրաստանում էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման նոր մոդելի անցման գործընթացի հետ: Վրացական կողմը նախատեսում է նոր օրենդրական փոփոխություններ, որով անցում կկատարվի շուկայի ազատականեցման նոր մոդելին: Համաձայնագրի ստորագրումը նախատեսվում է նշված գործընթացի ավարտից հետո:
6.1	Աստիճանաբար ընդլայնել այն ծրագրերի իրականացումը, որոնք կնպաստեն վերականգնվող էներգետիկ ռեսուրսների վրա հիմնված ջեռուցման և տաք ջրի արտադրության անհատական համակարգերի օգտագործմանը	Արևային ջրատաքացուցիչների համակարգերի ներդրում 1500-7500 դրամ/լիտր (60ՕՇ70ՕՇ)	Շարունակական մինչև 2040թ. և հետո	2017թ.-ից Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իրականացվում է Հայաստանի համայնքների էներգաարդյունավետության բարձրացման ծրագիրը: Ծրագրի մեկնարկից մինչև 31.12.2024թ. ՀՀ բնակավայրերում տեղադրվել են 1.365 մլրդ ՀՀ դրամի 3417 արևային ջրատաքացուցիչ անհատական համակարգեր (9.5 ԳՎտxժ էներգիայի խնայողություն), որից՝ 2024թ.-ի ընթացքում՝ 4.43 մլն ՀՀ դրամի 13 համակարգեր (տարեկան 47.6 ՄՎտxժ էներգիայի խնայողություն):
6.2	«Ջերմամատակարարման մասին» ՀՀ նոր օրենքի մշակում	Ջերմամատակարարման ոլորտի կարգավորման և նորմատիվային դաշտի ապահովում	2023-2025 թվականներ	«Ջերմամատակարարման մասին» օրենքի մշակման նպատակով «ԵՄ-ն էներգետիկայի համար» ծրագրի շրջանակներում իրականացվել է բացերի վերլուծություն, որի արդյունքների հիման վրա կմեկնարկեն օրենքի մշակման աշխատանքները:

7.1	«Գազամատակարարման մասին» ժամանակակից սկզբունքների վրա հիմնված նոր օրենքի մշակում	Ոլորտի կառավարման սկզբունքների հստակեցում, հիմնված միջազգային լավագույն փորձի վրա	2023-2025 թվականներ	«Գազամատակարարման մասին» օրենքի մշակման նպատակով «ԵՄ-ն էներգետիկայի համար» ծրագրի շրջանակներում իրականացվել է բացերի վերլուծություն, որի արդյունքների հիման վրա կմեկնարկեն օրենքի մշակման աշխատանքները:
8.3	ՀՀ-ում կանոնավոր տարեկան էներգետիկ վիճակագրության իրականացում	ՀՀ տարեկան էներգետիկ հաշվեկշռի կազմում՝ միջազգային էներգետիկ հանձնաժողովի ստանդարտներին համապատասխան	տարեկան պարբերականությամբ	2024թ. փետրվարին Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվել է 2022թ. ՀՀ էներգետիկ հաշվեկշիռը, ինչը տեղադրվել է նաև www.mtad.am կայքում: Մշակվել է 2023թ. ՀՀ էներգետիկ հաշվեկշիռը, ինչը կհրապարակվի 2025թ. փետրվարին:
8.4	8.4 Էներգաարդյունավետության և էներգախնայողության նոր չափանիշների սահմանում և դրանց իրականացումը ապահովող ազգային ստանդարտների մշակում և ընդունում	Էներգաարդյու-նավետության և էներգախնայողության նոր ազգային ստանդարտներ արտադրանքի և ծառայությունների համար	շարունակական	2024թ.-ին «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ կողմից ընդունվել են էներգաարդյունավետության և էներգախնայողության նոր չափանիշներ սահմանող և դրանց իրականացումն ապահովող թվով վեց ազգային ստանդարտներ. ՀՍՏ ԵՆ 16798-17-2024 - Շենքերի էներգետիկ բնութագիր. Օդափոխությունը շենքերում. Մաս 17. Օդափոխության և օդորակման համակարգերի ստուգման ցուցումներ (Մոդուլ Մ4-11, Մ5-11, Մ6-11, Մ7-11), ՀՍՏ ԵՆ 15316-3-2024 - Շենքերի էներգետիկ բնութագիր (ՇԷԲ). Համակարգի էներգիայի պահանջարկի և արդյունավետության հաշվարկման մեթոդ. Մաս 3. Տարածքի (սենքի) ցանցային համակարգեր (կենցաղային տաք ջրամատակարարում (ԿՏՋ), ջեռուցում և հովացում). Մոդուլ Մ3-6, Մ4-6, Մ8-6, ՀՍՏ ԻՍՕ 17225-3-2024 - Պինդ կենսավառելիք. Վառելիքի տեխնիկական բնութագրեր և դասեր. Մաս 3. Փայտե բրիկետների դասակարգում,

				ՀՍՏ ԵՆ 16510-1-2024 - Պինդ վառելիքի այրման միջոցով աշխատող կենցաղային սարքեր. Մաս 1. Հիմնական պահանջներ և փորձարկման մեթոդներ, ՀՍՏ ԵՆ 16510-2-1-2024 - Պինդ վառելիքի այրման միջոցով աշխատող կենցաղային սարքեր. Մաս 2-1 Սենյակային ջեռուցիչներ, ՀՍՏ ԵՆ 15250-2024 - Պինդ վառելիքով աշխատող դանդաղ ջերմանջատման սարքեր. Հիմնական պահանջներ և փորձարկման մեթոդներ:
9.4	9.4 ՀԱԷԿ տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 9.4.1 – 9.4.2 կետեր 9.4.1 ISO/IEC 27000-ը " Security Management Systems (ISMS) standards" 9.4.2 NIST SP 800-53 “Security and Privacy Controls for Information Systems and Organizations”	ՀԱԷԿ կիբեռանվտան-գության և թվային փոխակերպման ապահովում	2023-2025 թվականներ	ՀԱԷԿ տեղեկատվական անվտանգության ISO/IEC 27000-ը «Security Management Systems (ISMS) standards» և NIST SP 800-53 «Security and Privacy Controls for Information Systems and Organizations» միջազգային ստանդարտների ներդրման աշխատանքներն ընթացքի մեջ են: Աշխատանքները կավարտվեն 2025 թվականին:
9.5	9.5 Երևանի ՋԷԿ տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 9.5.1 – 9.5.2 կետերի 9.5.1 ISO/IEC 27000-ը " Security Management Systems (ISMS) standards" 9.5.2 NIST SP 800-53 “Security and Privacy Controls for	Երևանի ՋԷԿ կիբեռանվտանգության և թվային փոխակերպման ապահովում	2023-2025 թվականներ	Երևանի ՋԷԿ տեղեկատվական անվտանգության, ինչպես նաև կառավարման բարելավման ISO միջազգային ստանդարտների ներդրման նպատակով 2024թ. դեկտեմբերի 6-ին հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Բիզնեսին Ընդառաջ» Որակի Կենտրոն ՍՊԸ-ն: «Գնումների մասին» օրենքով սահմանված ընթացակարգով կկնքվի համապատասխան պայմանագիր և կմեկնարկեն աշխատանքները: Աշխատանքների ավարտը նախատեսվում է պայմանագրի կնքման օրվանից իննը ամսվա ընթացքում:

	Information Systems and Organizations”			
9.6	9.6 ԲԷՑ տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 9.6.1 – 9.6.2 կետերի 9.6.1 ISO/IEC 27000-ը " Security Management Systems (ISMS) standards" 9.6.2 NIST SP 800-53 “Security and Privacy Controls for Information Systems and Organizations	ԲԷՑ կիբեռանվտան-գության և թվային փոխակերպման ապահովում	2023-2025 թվականներ	ԲԷՑ տեղեկատվական անվտանգության և կառավարման բարելավման ISO միջազգային ստանդարտների ներդրման նպատակով 2024թ. դեկտեմբերի 20-ին հայտարարվել է մրցույթ: «Գնումների մասին» օրենքով սահմանված ընթացակարգով մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ կկնքվի համապատասխան պայմանագիր և կմեկնարկեն աշխատանքները:
9.7	9.7 ԷԷՀՕ տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտներիներդրում՝ համաձայն 9.7.1 – 9.7.2 կետերի 9.7.1 ISO/IEC 27000-ը " Security Management Systems (ISMS) standards" 9.7.2 NIST SP 800-53 “Security and Privacy Controls for Information Systems and Organizations”	ԷԷՀՕ կիբեռանվտան-գության և թվային փոխակերպման ապահովում	2023-2025 թվականներ	ԷԷՀՕ տեղեկատվական անվտանգության և կառավարման բարելավման ISO միջազգային ստանդարտների ներդրման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում 2024թ. նոյեմբերի 26-ին Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի և «Բիզնեսին Ընդառաջ» Որակի Կենտրոն ՍՊԸ-ի միջև կնքվել է համապատասխան պայմանագիր: Աշխատանքները նախատեսվում է ավարտել պայմանագրի կնքման օրվանից 90 օրվա ընթացքում:
9.8	9.8 ԷԷՇՕ տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 9.8.1 – 9.8.2 կետերի	ԷԷՇՕ կիբեռանվտան-գության և թվային փոխակերպման ապահովում	2023-2025 թվականներ	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ամբողջությամբ ավարտել են ԷԷՇՕ տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտների ներդրման աշխատանքները, ընկերությունն անցել է միջազգային սերտիֆիկացնող մարմնի

	9.8.1 ISO/IEC 27000-ը " Security Management Systems (ISMS) standards" 9.8.2 NIST SP 800-53 “Security and Privacy Controls for Information Systems and Organizations”			աուդիտ և ստացել ISO 9001, ISO 14001, ISO 27001, ISO 37001 և ISO 50001 սերտիֆիկատները:
10.1	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	Էներգահամակարգի անվտանգ և հուսալի շահագործման և զարգացման համար բարձրակարգ գիտելիքահենք մասնագետների ապահովում	շարունակական	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտում վերանայվել և փոփոխվել են մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը՝ համապատասխանեցնելով դրանք ոլորտի ժամանակակից պահանջներին: Կանաչ էներգետիկայի զարգացման խթանումը լինելով ՀԱՊՀ-ի առաջնահերթություններից՝ հաշվետու տարում իրականացվել են. - էներգետիկայի ոլորտում կիրառական նշանակության տարբեր նախագծերի իրականացման նպատակով ստեղծվել է Պոլիտեխնիկի էներգետիկ լուծումների մասնագիտական թիմ, որի կողմից իրականացվել են ներքոնշյալ նախագծերը. ✓ ՀԱՊՀ 2-րդ մասնաշենքի տեղադրված 90 և 70 կՎտ հզորությամբ արևային կայանների նախագծային աշխատանքները, ✓ 9-րդ մասնաշենքի տեղադրված 150 կՎտ հզորությամբ արևային կայանների նախագծային աշխատանքները, ✓ 21-րդ մասնաշենքի տեղադրված 60 կՎտ հզորությամբ արևային կայանների նախագծային աշխատանքները, ✓ 5-րդ մասնաշենքի տեղադրված 60 կՎտ հզորությամբ արևային կայանների նախագծային աշխատանքները:

				-ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագրի շրջանակներում ՀԱՊՀ-ում բացվել է «Էներգետիկայի ռազմավարական զարգացման լաբորատորիա», որը համալրված է նորագույն տեխնոլոգիական լուծումներով և ծրագրերով: - «Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. հասարակական շենքերում էներգախնայողության բարձրացման մեխանիզմների կիրառումը և «կանաչ էներգետիկայի» զարգացման խթանում» ծրագրի շրջանակներում ՀԱՊՀ-ն համագործակցելով Հայաստանի վերականգնվող էներգիայի և էներգախնայողության հիմնադրամի հետ, Եվրասիական կայուն զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացրել է խորհրդատվական ծառայության աշխատանքներ: Նշված շրջանակներում՝ ՀՀ տարբեր համայնքներում իրականացվել են էներգաարդյունավետության և էներգախնայողության նորարարական լուծումների հանրայնացման իրազեկման արշավներ, Գյումրի, Կապան, Վանաձոր և Երևան քաղաքներում կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ: - ՀԱՊՀ-ն մշակել է «Շենքերի և շինությունների էներգետիկ աուդիտի» երկամսյա և վեցամսյա կարճաժամկետ դասընթացներ՝ RECONOMY «Հմտությունների զարգացում էներգաարդյունավետ շինարարության ոլորտում» ծրագրի շրջանակներում: -ՄԱԿ Զարգացման ծրագրի շրջանակներում ՀԱՊՀ-ում 2024թ. նոյեմբերին մեկնարկել է «Շենքերի և շինությունների էներգետիկ աուդիտի» վեցամսյա դասընթացը, որը միտված է աջակցելու սոցիալապես անապահով կանանց ներգրավմանը էներգետիկ ոլորտում: Ծրագրի ավարտին դասընթացին ներգրավված 19 կին մասնակիցներ կստանան որակավորում և կկարողանան ապահովել իրենց մասնագիտական տեղը

				էներգաարդյունավետության ոլորտում՝ դրանով իսկ նպաստելով ոլորտի զարգացմանը և կանանց հավասար հնարավորությունների ստեղծմանը:
10.2	«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	Գիտահետազոտական ուսումնասիրությունների կիրառում էներգահամակարգի տարբեր ենթաոլորտներում	շարունակական	«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ կողմից իրականացվել են. - Հայաստանի 2023թ. էներգետիկ հաշվեկշռի կազմում (ավարտված է), - Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հաղորդման և բաշխման ցանցին միացվող արևային ֆոտովոլտային կայաններին ներկայացվող պահանջների նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակում (ընթացքում է), - Գլխադասային հանձնաժողովի կողմից կազմակերպվող գիտելիքների ստուգում և էլեկտրաանվտանգության 5-րդ խմբի շնորհում (շարունակական), - «ՀՀ էներգահամակարգի 220 կՎ և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 110 կՎ ցանցում էլեկտրաէներգիայի կորուստների հաշվարկ և վերլուծություն» (ընթացքում է), -«110-0.4 կՎ ցանցի կայունացված և լարման ռեժիմների հաշվարկներ և վերլուծություն, բաշխիչ ցանցերում ռեակտիվ հզորության կոմպենսացիայի միջոցառումների մշակում և գործող արտադրող կայանների աշխատանքով պայմանավորված բաշխիչ ցանցում ազդեցության գնահատման հաշվարկների իրականացում և որակավորման բարձրացման դասընթացների անցկացում» (ավարտված է), - Գիտական կադրերի պատրաստում և ճարտարագիտա-տեխնիկական ղեկավար կադրերի վերապատրաստում, որակավորման բարձրացման դասընթացների անցկացում , (շարունակական), - Հակավթարային ավտոմատիկայի և ՌՊԱ ներկայացվող

				պահանջների մշակման աշխատանքներ (ավարտված է), - «Բնակելի և հասարակական շենքերի էլեկտրասարքավորանք. Նախագծման նորմեր» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքներ (ընթացքում է), - ՀՀ Էներգահամակարգի հաղորդման ցանցի 2025-2034թթ. զարգացման ծրագրի մշակման համար հաղորդման ցանցի մոդելավորման, ստատիկ և դինամիկ կայունության, կարճ միացման հաշվարկների կատարման աշխատանքներ (ավարտված է), - Երևան քաղաքի 6(10) կՎ բաշխման ցանցերի միագծանի սխեմաների գծում (թվայնացում), սնուցման խափանման հնարավոր դեպքերի դիտարկում և վթարային սխեմաների մշակում (ընթացքում է), - Աջակցություն Հայաստանի համար կլիմայական չեզոքության մոդելի մշակմանը և մասնագիտացված գործիքի մշակմանը, որը կարող է օգտագործվել՝ ապահովելու էներգետիկ և կլիմայական քաղաքականության քանակական վերլուծություն (ավարտված է), - Strengthening Research in Armenia for Energy Transition toward Climate Solutions (STREACS) (ընթացքում է):
10.3	«Հայատոմ» ՓԲԸ	Գիտահետազոտական ուսումնասիրությունների կիրառում ատոմային էներգետիկայի ոլորտներում	շարունակական	«ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ կողմից իրականացվել են. -«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար №3 և №4 տուրբոգեներատորների թրթռման տվիչների վերանորոգման և տրամաչափման աշխատանքներ, որի շրջանակներում կատարվել են 35 հատ (2ՊՄ-1 և 2ՊԱ-5 տեսակի) պյեզոէլեկտրական տվիչների վերանորոգման, տրամաչափման և կարգաբերման աշխատանքներ: -ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի ռեակտորի ներիրանային համակարգի հսկման (ՆԻՀՀ) մոդելի մշակում և թեստավորում, որի

				շրջանակներում կատարվել է ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորի ՆԻՀՀ համակարգի մոդելի մշակում, թեստավորում և ինտեգրում լիամասշտաբ վարժասարքին: - «ՀԱԷԿ» ՓԲԸ ինժեներական սեյսմիկ կայանի (ИСС) և ռեակտորի վերահսկման սեյսմիկ մշտադիտարկման համակարգի արդիականացում, որի հիմնական նպատակն է եղել «ՀԱԷԿ» ՓԲԸ բարոյապես և ֆիզիկապես մաշված սեյսմիկ մոնիտորինգի համակարգի փոխարինումը նոր ժամանակակից ծրագրատեխնիկական թվային համակարգով: - «ՀԱԷԿ» ՓԲԸ 2-րդ էներգաբլոկի լիամասշտաբ վարժասարքի ընդլայնում, արդիականացում և շահագործման հանձնում, որի շրջանակներում իրականացվել են լիամասշտաբ վարժասարքի ընդլայնման և արդիականացման տարաբնույթ և բազմակողմանի աշխատանքներ, այդ թվում՝ կատարվել են ԱԷԿ-ների անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև ՋՋԷՌ էներգաբլոկներով ԱԷԿ-ների սարքավորումների և համակարգերի շահագործման նորմատիվ տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթերի մշակում:
11.1	ՀԱԷԿ կառավարման բարելավում և միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 11.1.3 – 11.1.7 կետերի 11.1.3 ISO 9001: 2015 Quality Management 11.1.4 ISO 37001: 2016 Anti-Bribery Management Systems	ՀԱԷԿ գործունեության արդյունավետ կառավարման ապահովում՝ համաձայն միջազգային ստանդարտների	2021-2024թթ.	ՀԱԷԿ կառավարման բարելավում և միջազգային ստանդարտների ներդրման մասով. -ISO 9001: 2015 Quality Management, ISO 14001: 2015 Environmental Management Systems - ներդրված են, 02.12.2024թ. տրվել են համապատասխանության սերտիֆիկատներ, -ISO 37001: 2016 Anti-Bribery Management Systems, ISO 50001: 2018 Energy Management Systems, ISO 31000: Risk Management – ստանդարտների ներդրման աշխատանքներն ավարտման փուլում են:

	11.1.5 ISO 50001: 2018 Energy Management Systems			
	11.1.6 ISO 14001: 2015 Environmental Management Systems			
	11.1.7 ISO 31000: Risk Management			
11.2	Երևանի ՋԷԿ կառավարման բարելավում և միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 11.2.3 – 11.2.7 կետերի	Երևանի ՋԷԿ գործունեության արդյունավետ կառավարման ապահովում՝ համաձայն միջազգային ստանդարտների	2021-2024թթ.	Երևանի ՋԷԿ կառավարման բարելավման միջազգային ստանդարտների ներդրման նպատակով 2024թ. դեկտեմբերի 6-ին հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Բիզնեսին Ընդառաջ» Որակի Կենտրոն ՍՊԸ-ն: «Գնումների մասին» օրենքով սահմանված ընթացակարգով կկնքվի համապատասխան պայմանագիր և կմեկնարկեն աշխատանքները: Աշխատանքների ավարտը նախատեսվում է պայմանագրի կնքման օրվանից ինը ամսվա ընթացքում:
	11.2.3 ISO 9001: 2015 Quality Management			
	11.2.4 ISO 37001: 2016 Anti-Bribery Management Systems			
	11.2.5 ISO 50001: 2018 Energy Management Systems			
	11.2.6 ISO 14001: 2015 Environmental Management Systems			
	11.2.7 ISO 31000: Risk Management			
11.3	ԲԷՑ կառավարման բարելավում և միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 11.3.3 – 11.3.7 կետերի	ԲԷՑ գործունեության արդյունավետ կառավարման ապահովում՝ համաձայն միջազգային ստանդարտների	2021-2024թթ	ԲԷՑ կառավարման բարելավման միջազգային ստանդարտների ներդրման նպատակով 2024թ. դեկտեմբերի 20-ին հայտարարվել է մրցույթ: «Գնումների մասին» օրենքով սահմանված ընթացակարգով մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ կկնքվի համապատասխան պայմանագիր և կմեկնարկեն աշխատանքները:
	11.3.3 ISO 9001: 2015			

	Quality Management			
	11.3.4 ISO 37001: 2016 Anti-Bribery Management Systems			
	11.3.5 ISO 50001: 2018 Energy Management Systems			
	11.3.6 ISO 14001: 2015 Environmental Management Systems			
	11.3.7 ISO 31000: Risk Management			
11.4	ԷԷՀՕ կառավարման բարելավում և միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 11.4.3 – 11.4.7 կետերի	ԷԷՀՕ գործունեության արդյունավետ կառավարման ապահովում՝ համաձայն միջազգային ստանդարտների	2021-2024թթ.	ԷԷՀՕ կառավարման բարելավման միջազգային ստանդարտների ներդրման նպատակով 2024թ. նոյեմբերի 26-ին մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Բիզնեսին Ընդառաջ» Որակի Կենտրոն ՍՊԸ-ի հետ կնքվել է համապատասխան պայմանագիր: Աշխատանքները նախատեսվում է ավարտել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրվա ընթացքում: Աշխատանքներն ընթացքում են, ավարտը՝ 2025թ. 1-ին եռամսյակ:
	11.4.3 ISO 9001: 2015 Quality Management			
	11.4.4 ISO 37001: 2016 Anti-Bribery Management Systems			
	11.4.5 ISO 50001: 2018 Energy Management Systems			
	11.4.6 ISO 14001: 2015 Environmental Management Systems			
	11.4.7 ISO 31000: Risk Management			
11.5	ԷԷՇՕ կառավարման բարելավում և միջազգային ստանդարտների	ԷԷՇՕ գործունեության արդյունավետ	2021-2024թթ.	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ամբողջությամբ ավարտել են ԷԷՇՕ կառավարման բարելավման միջազգային

	ներդրում՝ համաձայն 11.5.3 – 11.5.7 կետերի	կառավարման ապահովում՝ համաձայն միջազգային ստանդարտների		ստանդարտների ներդրման աշխատանքները: Ընկերությունն անցել է Միջազգային սերտիֆիկացնող մարմնի աուդիտ և ստացել ԻՍՕ 9001, ԻՍՕ 14001, ԻՍՕ 27001, ԻՍՕ 37001 և ԻՍՕ 50001 սերտիֆիկատները:
	11.5.3 ISO 9001: 2015 Quality Management			
	11.5.4 ISO 37001: 2016 Anti-Bribery Management Systems			
	11.5.5 ISO 50001: 2018 Energy Management Systems			
	11.5.6 ISO 14001: 2015 Environmental Management Systems			
	11.5.7 ISO 31000: Risk Management			